

խառակցութեամբ: Տարեկան պէտք է 4 դիրք հրատարակուի 5 ր. բաժանորդագնով: Մեծ յոյս ունինք որ այս թերթը հայպիտական գրականութեան մէջ իւր պատուաւոր տեղը պիտի բռնէ: Ի սրտէ յաջողութիւն եւք ցանկանում եւ յանձնարարում մեր բանասերնէ ին:



ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՏԵՓԱՆԷ.

Ստեփաննէն մեր եկեղեցու այս գարու երկրորդ կիսի այն սպասաւորներէց մէկն էր որ համարարանական ուսումը հոգեւորականի համար աւելորդ շտայլութիւն չհամարեց, այլ ժողովրդին ծառայելու զարգացում տողորուած կրօնաւորի սրեմն ստաւ. առաջին օրինակը առեւ էր Գրիգոր եպիսկոպոս Աղափրեանս նորան հեռեկցին Վահան վարդապետ Քասառմանն եւ Խորէն Ստեփանն: Հանգուցեալը յայտնի է իւր մանկավարժական—գրական եւ հովուական—քարոզչական գործունէութեամբ. մանկավարժական—գրական գործունէութիւնն սկսել էր դեռ եւս աշխարհական ժամանակից, երբ 1862 թ. իւր ուսումը Մոսկուայի համալսարանի իրաւարանական բաժնում աւարտելուց յետոյ՝ Քիֆիիս վերադարձաւ: Իբրև մանկավարժ երկար տարիներ այլ եւ այլ քաղաքներում ուսուցչական եւ տեսչական պաշտօն է վարել: Նախ Քիֆիիսի առաջին գիմնազիայի պատմութեան ուսուցիչ եւ նորաշէնի եկեղեցու աղջկանց դպրոցի տեսուչ է եղել (հանգուցեալը իւր մանկավարժական գործունէութեան ժամանակ ասանձին ուշադրութիւն էր դարձնում յատկապէս աղջկանց կրթութեան վերայ), ապա փանտիանութեան մէջ մանկուց յետոյ՝ 1872 թ. ժառանգաւորաց եւ Վարդաշապատի դպրոցի մէջ. նոյն թուին յունիսի 3-ին նշանակուել է երեսնի

թեմական դպրանոցի տեսուչ, իսկ հետեւալ տարին՝ 1873 թ. յունիսի 20-ին նոյն կոչմամբ նուշի: 1876 թ. Բագուի դպրոցների տեսուչ է նշանակուել, ուր գործել է մի քանի տարի նաև իբրև քարոզիչ: 1880 թ. իբրև ասանձին շնորհ եւ վարձատրութիւն հանգուցեալ Գեորգ Գ. մեծադործ կաթուղիկոսի կողմից ուղարկուել է Փարիզ եւ Զուիցերիա մանկավարժական գիտութեան եւ քարոզչական արուեստի մէջ կատարելագործուելու: 1882 թ. հոկտ. 5-ին նշանակուել է Ախայցխայի տեսուչ:

Նորա գրական գործունէութիւնն էլ սերտ կապուած է մանկավարժական գործունէութեան հետ. Առաջին անգամ աշխատակցել է 1860 թուից «Հիւսիսային» միջև իսկ երբեմն ստանաւորներ գրելով: Քիֆիիս վերադառնալուց յետոյ՝ 15 տարի նա հրատարակում էր «Հայկական Աշխարհ» վերջին տարիները շատ անկանոն, որ աւելի մանկավարժական թերթ էր, քան գրական: Իւր յոյուածներէ մէջ հանգուցեալը երբեմն կըբոս էր բայց ընդհանրապէս յայտնի էր որպէս անկեղծ բնուորութիւն. 1871 թ. յունիսի 18 ին Ս. Ստեփաննէն հրատարակեց իւր թերթի դադարումը բայց յետոյ դարձել շարունակեց: 1884 թ. նա հրատարակեց մի ուրիշ թերթի «Մանկավարժանոց» որ միայն երկու տարի տևեց: Հանգուցեալը մանկավարժական յոյուածներով աշխատակցել է նաև «Արարատին»: Նորա գրական գործունէութեան զուխ գործոցը Մովսէս Խորենացու թարգմանութիւնն է հարուստ ծանօթութիւններով, այս թարգմանութիւնը թերութիւնից տղատ չէ, բայց ներքի է Խորենացու լեզուի զժուարութիւններն աչքի առաջ ունենալով երկրորդ հրատարակութիւնը շատ աւելի մշակուած է, քան առաջինը, որ թարգմանչի բարեխղճութեան եւ աշխատասիրութեան պիտի վերագրել: Առսերէնից թարգմանել է Ա. Տոլստոյի «Կէլցիբի Սոնաար»:

Հանգուցեալը պակաս արդիւնաւոր չէ եղել որպէս եկեղեցու պաշտօնեայ. փանք մտել է 1871 թ. Գեորգ Գ. Մեծադործ կաթուղիկոսի ժամանակ նախ որպէս կիսատարկաւագ եւ ապա 1872 թ. փետր. 20-ին սարկաւաղութեան

ստորձան ընդունել հանդուցեայ Բառամուտի և ուրիշ երկու ընկերների հետ նոյն ամսի 26-ին կուստրոն քահանայ է ձեռնադրուել իսկ 29-ին վերստ ասացել Անդրևս Արքեպիսկոպոսի ձևերով: 1873 թ. իւր հաւատարիմ և արդիւնաւոր ծառայութեան համար արժանացել է ծաղիկայ փխրների Փոխանորդական պաշտօն է վարել Ախայցիայում 1882 թ., դեկտ. 29-ից հոգեւոր հովուի պաշտօն է կատարել երկու մայրաքաղաքների եկեղեցիների համար և կրօնուսոյց եղել հոյսոց դպրոցում, մի և նոյն ժամանակ ի հարկ է բեմից յաճախ քարոզելով ժողովրդին: 1887 թ. 10-ին նշանակուում է մայրաքաղաքների եկեղեցիների կառավարութեան անդամ շատ կարճ ժամանակով: 1887 թ. ստանում է Խրիմու Ս. Խաչի վանահայրութեան պաշտօնը ուր մնում է մինչև 1893 թ., երբ ներկայ Ս. Հայրապետի իւր Աթոռն էր գալիս Երուսաղէմից Ս. Օժումն ընդունելու. հ. Ասեփանէն Ասու մնական յանձնաժողովի նախագահ և յետոյ գաւաղանակիր և Կիւսանայի և նշանակուում ն. Վեհափառութեան: Ս. Հայրապետի շնորհարարութեամբ 1894 թ. անգոս. 26-ին արժանացաւ եպիսկոպոսական բարձր աստիճանին մի և նոյն ժամանակ իրաւունք ստանալով պանակի կրելու: 1895 թ. փետր. 13-ին Աստրախանի թեմի ժամանակաւոր կառավարիչ նշանակուեցաւ, բայց տարին չբացած՝ արձակուեցաւ այդ պաշտօնից և հայրապետական № 334 կոնդակով կրկին Ս. Խաչի վանահայր նշանակուեցաւ: Վերջին ամիսներս Ս. Հայրապետի հրամանով Էջմիածին էր վերադառնում, երբ հիւանդացաւ ծանաղարհին և Թիֆլիսում նոյեմբերի 13-ին զիշերը հանգեաւ ի Տէր: Հանգուցեալը 25000 ռ. է կապել այլ և այլ հասաստութիւնների, որ պէտք է սպառին 130 ասրուց յետոյ՝ երբ ամբողջ դումարը 4 միլիոնի կհասնի: Ս. Հայրապետի հրամանով յուզարկուորութեան մասնակցում էին Թիֆլիսի Գերապառիւ առաջնորդից զատ՝ Գանձակի փոխանորդ Տ. Անանիա կպիսկոպոս, Գորուայ Տ. Խասահակ և Այլքասեղրապոլի Տ. Մատթէոս վարդապետները, Մայր Աթոռի Մխարանութեան կողմից Տ. Տիրայր վարդապետ: Բազուից, Երեւանից և Վաղարշապատից պատ-

գամաւ որով թիւներ էին ուղարկուած կամ նշանակուած, որ բարմաթիւ պատիւներ էին պրկլ զազապի վրայ:

Մի քանի խօսքով հանդուցեալի կեանքի ընթացքը նկարագրելով՝ դժուարանում ենք աւելի մանրամասնութիւններէ մեջ մտնել: Խորէն կպիսկոպոս Ասեփանէն սաղանդաւոր և համակրելի յատկութիւնների հետ ունէր և խոշոր թերութիւններ, այդ պատճառով ժամանակակից մարդու համար շատ դժուար է արդար գատաւոր հանդիսանալ նորա վերայ: Բայց ընդհանուր ասմամբ յանձին Ասեփանէի մեր եկեղեցին կորցնում է իւր անկեղծ և սրտացու սպասաւորներից մէկին: Նա մեծ ձիրք ունէր յատկապէս քարոզչութեան մէջ, յաճախ կարողանում էր արտասուք շարժել ունկնդիրների աչքում, ինչպէս լինէ նեք տկանաւաններից: Հայ և Ռուս թերթերը նորա մահուան տօթիւ համակրալից յողուածներ գրեցին: Նոյեմբ. 19-ին պատարագից յետոյ հոգեհանգիստ կատարուեցաւ Մայր Տաճարում, իսկ նոյն երեկոյեան ուսուցչական խմբի ներկայութեամբ ձեւագրանում, որ 1878/9 թ. ուսուցչութիւն է արել*:

Լուսաւորեսցէ Տէր զհոգի հանդուցելոյն: Ամէն:

Ա. Զ. Գ.

Անցեալ տարի Մ. Աթոռոյ ձեւարանի բացման Եւ. տարեդարձի տօթիւ կարգացուած անդիկազրի մեջ յիշուեցաւ, որ Վ. Աղու յեցի առաջնակարգ վաճառական պ. Ս. Հախնաղարեան 500 ռ. էր նուիրել օրինակելի քարոզների մի ժողովածու հրատարակելու նպատակով: Այդ նպատակն իրողործելու համար պ. Հախնաղարեան նախօրօք մեզ էր զիմել և մենք յանձն էինք ստել կազմել այդպիսի մի

* Տարապաղարար այսպիսի խնդիրներում իսկ մեր հայ քերթից ունեմ անայտնօրիւն պահպանել լիարդացան, հոշակելով, քե հանգուցեալը հալածանի է կրել եկեղեցու վարչութեան կողմից: Երուսաղիմ այն է, որ մա վերջին տարիները վահանայտնիցից դուրս ուրիշ պաշտօն լիստարեց, բայց բոլորովն ուրիշ պատճառներով, քան պիտակի էր հայ քերթից մեկը, որին հետեւի էին ևս ուրիշները: